# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝**

Դիանա Քարազյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավարի տեղակալ

**Գործուղման վայրը և ժամկետները**

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2024թ. մարտի 25-ից 29-ը ներառյալ:

**Հրավիրող կողմը**

Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

**Գործուղման նպատակը**

Գործուղման նպատակն է եղել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների ղեկավար կոմիտեի (CDDH) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (այսուհետ՝ Կոնվենցիա) կից 15-րդ և 16-րդ Արձանագրությունների նախնական արդյունավետությունը գնահատելու համար ձևավորված աշխատանքային խմբի (DH-SYSC-PRO) առաջին հանդիպման մասնակցությունը և ՀՀ դիրքորոշման ներկայացումը:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպման ընթացքում, որին մասնակցել են ԵԽ 14 անդամ պետություններ, քննարկվել են Կոնվենցիային կից 15-րդ և 16-րդ Արձանագրությունների նախնական արդյունավետությունը գնահատող տարբեր ասպեկտներ: Մասնավորապես, քննարկվել են Կոնվենցիային կից 16-րդ արձանագրությամբ նախատեսվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից

խորհրդատվական կարծիք տրամադրելու արդյունավետությանը վերաբերող հարցեր: ՀՀ կողմից հանդիպմանը մասնակցող Դ. Քարազյանը ներկայացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա Եվրոպական դատարանի կողմից տրամադրված խորհրդատվական կարծիքների, ինչպես նաև գործընթացի ընթացակարգային առանձնահատկությունների վերաբերյալ ՀՀ փորձը: Դ. Քարազյանը ներկայացրել է նաև 16-րդ Արձանագրության իմպլեմենտացիայի շրջանակներում դատավարական օրենսգրքերում և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու ՀՀ փորձը: Քննարկվել են նաև խորհրդատավական կարծիքի տրամադրման գործընթացի շրջանակներում կառավարությունների ներկայացուցիչների դերակատարմանը վերաբերող հարցեր:

Կոնվենցիային կից 15-րդ Արձանագրության շրջանակներում քննարկվել են պետությունների հայեցողության շրջանակի և սուբսիդիարության սկզբունքների կիրառման արդյունավետությանը վերաբերող հարցեր: Քննարկվել են նաև նույն Արձանագրությամբ նախատեսվող՝ Եվրոպական դատարանի Պալատի իրավազորությունը Մեծ Պալատին զիջելու դեպքերում կողմերի առարկության հնարավորության վերացմանը վերաբերող հարցեր: Այս մասով ևս ներկայացվել է ՀՀ փորձը: Այս առնչությամբ որոշվել է աշխատանքային խմբի նախագահողի կողմից կառավարությունների ներկայացուցիչներին լրացուցիչ հարցադրումներ ուղարկել առաջիկայում:

Հանդիպման ավարտին ընդունվել է համապատասխան արձանագրություն, որը հասանելի է նաև հետևյալ հղումով՝ https://rm.coe.int/meeting-report-1st-meeting-dh-sysc-pro/1680af1be4 :

**Ստորագրություն, ամսաթիվ**

03.04.2024թ.